Հաստատում եմ՝

Տնօրեն

ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀՀ Լոռու մարզ
Վանաձորի Վահե Մելիքսեթյանի անվան
թիվ 28 հիմնական դպրոց
V «Ա» դասարան

Դարբինյան Ռիմա Հմայակի

«2022 - 2023» ուսումնական տարի

ԿՐԹԱԿԱՆ - ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը)

2022-2023 ուսումնական տարում Վանաձորի Վահե Մելիքսեթյանի անվան թիվ 28 հիմնական դպրոցի V «Ա» դասարանում սովորում է 28 աշակերտ (17-ը՝ տղա, 11-ը՝ աղջիկ): Աշակերտները խելացի են, հարցասեր, ունեն պատասխանատվության բարձր զգացում: Մշտապես ուշադրության կենտրոնում եմ պահում աշակերտների կարգապահությունը, սովորողների կողմից բարձրաձայնված հարցերի քննարկումը: Աշակերտները, բնականաբար, ունեն բնավորության տարբեր գծեր, սակայն հետևողականորեն ձևավորում ենք համերաշխ ու ընկերասեր մթնոլորտ: Յուրաքանչյուր աշակերտ աչքի է ընկնում պատասխանատվության բարձր զգացումով և պատրաստակամությամբ:

2 ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

2022-2023 ուսումնական տարվա ընթացքում մանկավարժական կոլեկտիվի կողմից լինելու է սովորողների վարքի և առաջադիմության մշտադիտարկում: Անհրաժեշտ է ուսումնադաստիարակչական աշխատանքներն իրականացնելիս ուշադրություն դարձնել աշակերտների փոխհարաբերություններին, սերմանել գիտակցված պարտաճանաչություն՝ ուսման նկատմամբ: Ինչպես նաև անհրաժեշտ է մշտապես հետևել աշակերտի վարքագծին, օրվա ռեժիմին և դասարանի՝ կոլեկտիվ մտածողությանը: Ուսումնադաստիարակչական աշխատանքներ իրաանացնելիս առաջնային նշանակություն ունեն աշակերտների խառնվածքի տիպերը, տարիքային առանձնահատկությունները:

3.ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն - Սովորողների հետ զրույցների ընթացքում անհրաժեշտ է ձեռնարկել խոսուն բայլեր, որոնք կնպաստեն երեխայի՝ աղանդավորական շարժումներից զերծ մնալուն: Դասղեկական դասաժամերի ընթացքում երեխաներին գիտելիքներ հաղորդել եկեղեցական տոների մասին (Սուրբ ծնունդ, Հարության տոն և այլն): Հոգևոր դաստիարակության գործում ոչ պակաս կարևոր նշանակություն ունեն էքսկուրսիաները և թանգարանային այցերը:

3.2 Գեղագիտական դաստիարակություն - Աշակերտների հետ տարատեսակ զրույցների ժամանակ, ինչպես նաև միջոցառումների կազմակերպման ընթացքում զարգացնել գեղեցիկի նկատմամբ հետաքրքրությունը, ուշադրություն դարձնել գեղագիտական դաստիարակությանը:

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն – Աշակերտներին ներկայացնել Հայաստանի և Արցախի ազգային հերոսներին, հայ ազգի մեծերին՝ ի ցույց դնելով նրանց անուրանալի վաստակը, ինչպես նաև հայրենասիրական թեմաներով զրույցներ ունենալ: Անկախության տոնին և Հայոց բանակի օրվան նվիրված բաց դասեր կազմակերպել՝ կարևորելով Հայոց բանակի և անկախության դերն ու նշանակությունը:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն – Դասարանի աշակերտների համար մշտապես կիրառվող կենսաձև դարձնել առողջ ապրելակերպը: Հետևել աշակերտների կեցվածքին, ֆիզկուլտուրայի դասաժամերին մասնակցությանը, նստելաձևին, գործնականում կիրառել հայտնի ասույթը՝ «Առողջ մարմնում՝ առողջ հոգի»:

3.5 Աշխատանքային դաստիարակություն – Թե՛ դասղեկական դասաժամերի ընթացքում, թե՛ առօրյա զրույցներում աշակերտներին բացատրել, որ չկա այնպիսի աշխատանք, որը կարևոր չէ և գնահատման արժանի չէ: Բացատրել, որ յուրաքանչյուր ոք իր նպատակներին կարող է հասնել, եթե արդար քրտինքով աշխատի և գնահատի աշխատանքի կարևորությունը: Աշակերտներին ներկայացնել նաև ախատանքային պայմանագրի, աշխատանքային իրավունքների ու պարտականությունների կարևորությունը:

3.6 Բնապահպանական դաստիարակություն - Երեխաների հետ հաճախ զրուցել բնության և շրջակա միջավայրի պահպանության մասին՝ մատնանշելով բնության և մեր առողջության միջև առկա անքակտելի կապը: Սովորողին դաստիարակել որպես բնության տեր և, միևնույն ժամանակ, ծառա:

4.Դպրոց - ընտանիք կապը – Ծնողական ժողովների և ծնողների հետ համատեղ աշխատանքի շնորհիվ ամրապնդել ծնող-ուսուցիչ-աշակերտ կապը՝ մշտապես ուշադրության կենտրոնում պահելով սովորողների կապվածությունը ծնողների հետ: Ստեղծել փոխվստահության մթնոլորտ՝ թե՛ ուսուցիչ-ծնող, թե՛ ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերություններում:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետ	Կատարողներ
1-ին շաբաթ	Զրույց՝ «Նոր ուսումնական տարվա անելիքներն ու խնդիրները» թեմայով:	Սեպտեմբեր	Դասղեկ
2-րդ շաբաթ	Զրույց՝ «Հայաստան՝ սրբագործված հողակտոր» թեմայով:		Դասղեկ
3-րդ շաբաթ	Վարվեցողության կանոններ:		Դասղեկ
4-րդ շաբաթ	Զրույց՝ «Իմ սրտի քաղաք» թեմայով:		
5-րդ շաբաթ	Բաց դաս՝ «Ուսուցիչ□ սրբագործված է ակ» թեմայով:	Հոկտեմբեր	Դասղեկ
6 -րդ շաբաթ	Զրույց՝ «Հանուն հայրենիքի» թեմայով:		Դասղեկ
7-րդ շաբաթ	Զրույց՝ «Իմ նվիրական երազանքները» թեմայով:		Դասղեկ
8-րդ շաբաթ	Զրույց՝ «Արդյոք ես լա՞վ ընկեր եմ» թեմայով:		Դասղեկ
9-րդ շաբաթ	Զրույց՝ «Ես՝ որպես ընտանիքի անդամ» թեմայով:	Նոյեմբեր	Դասղեկ
10-րդ շաբաթ	Զրույց՝ «Աշնանային ճեմուղի□ սեր ու թախիծ» թեմայով:		Դասղեկ
11-րդ շաբաթ	Էքսկուրսիա՝ դեպի մայր բնություն□□□		Դասղեկ
12- րդ շաբաթ	Զրույց՝ «Ինչպե՞ս օգնել ձմեռող թռչուններին» թեմայով:		Դասղեկ, ուս□ գծով փոխտնօրեն
13-րդ շաբաթ	Զրույց՝ «Ժպիտ□ իմ սիրելի ուղեկից» թեմայով:	Դեկտեմբեր	Դասղեկ
14- րդ շաբաթ	Զրույց՝ «Մեծերի աշխարհում» թեմայի շուրջ:		Դասղեկ
15-րդ շաբաթ	Զրույց՝ «Եթե ես կարողանայի□□□» թեմայով:		Դասղեկ, բուժքույր
16-րդ շաբաթ	Նախատոնական միջոցառում:		Դասղեկ
17-րդ շաբաթ	Զրույց՝ «Ի՞նչ են պատմում ընտանեկան լուսանկարները» թեմայի շուրջ:	Հունվար	Դասղեկ
18-րդ շաբաթ	Զրույց՝ «Հայրենասիրությունը՝ էության մի մասնիկ» թեմայով:		Դասղեկ
19-րդ շաբաթ	Զրույց՝ «Ես փոքրիկ բնապահպան եմ» թեմայով:		Դասղեկ

20-րդ շաբաթ	Հիգիենայի մասին զրույց, քննարկում:	Փետրվար	Դասղեկ, բուժքույր
21-րդ շաբաթ	Զրույց՝ «Եթե ես լինեի հայտնի մարդ□□□» թեմայով:		Դասղեկ
22-րդ շաբաթ	Զրույց՝ «Ինչպիսի՞ն եմ պատկերացնում իմ ապագան» թեմայով:		Դասղեկ
23-րդ շաբաթ	Զրույց՝ «Ինչպե՞ս դառնալ ընթերցասեր» թեմայով:		Դասղեկ, գրադարանա-վարուհի
24-րդ շաբաթ	«Գարուն, երբեք մի՛ ուշացիր»:	Մարտ	Դասղեկ
25-րդ շաբաթ	Բաց դաս՝ «Մայր, իմ անգին էակ» թեմայով:		Դասղեկ
26-րդ շաբաթ	Զրույց՝ «Սիրենք մեր մոլորակը » թեմայով:		Դասղեկ
27-րդ շաբաթ	Զրույց՝ «Հիշում ենք և պահանջում» թեմայով:	Ապրիլ	Դասղեկ
28-րդ շաբաթ	Զրույց՝ «Արտագաղթը չարիք է» թեմայով:		Դասղեկ
29-րդ շաբաթ	Լինենք օրինապահ:		Դասղեկ
30-րդ շաբաթ	Զրույց՝ «Իմ տունը» թեմայի շուրջ:		Դասղեկ
31-րդ շաբաթ	Զրույց՝ «Մայիս՝ հաղթանակների ամիս» թեմայով:	Մայիս	Դասղեկ
32-րդ շաբաթ	Տեսադաս՝ «Մնաս բարով, V դասարան□□□»:		Դասղեկ
33-րդ շաբաթ	Զրույց՝ «V դասարանի ուրախ և տխուր ակնթարթները» թեմայի շուրջ:		Դասղեկ
34-րդ շաբաթ	Ավարտական միջոցառում:		Դասղեկ

ԴԱՍՂԵԿԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱՆ

Դասղեկի անցկացրած միջոցառման(դասախոսություն, զրույցներ, դիտողական արշավներ, էքսկուրսիաներ և այլն) բովանդակությունը:
Համադպրոցական միջոցառում՝ նվիրված Գիտելիքի օրվան:
Միջոցառում՝ նվիրված Անկախության տոնին:
Ցերեկույթ՝ հայրենասիրական թեմայով:

ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

Քննարկվող հարցեր	Ժողովի համառոտ բովանդակությունը
Կազմակերպչական հարցեր	1. Ծնողների հետ ծանոթություն: 2. Ծնողներին իրազեկել նոր ուս. տարվա անելիքների մասին: 3. Ընտրել ծնողխորհրդի կազմ: 4. Դասագրքերի կոկիկ պահպանում:
Կազմակերպչական հարցեր Ուս. տարվա աշխատանքներ:	1. Զրույց՝ աշակերտների միջանձնային հարաբերությունների մասին: 2.Ծանոթացնել 2022-2023 ուստարվա աշխատանքներին:
Հիգիենան դպրոցում և տանը	Աշակերտների արտաքին տեսքի, դպրոցական համազգեստի, հիգիենայի մասին հարցերի քննարկում:
Կազմակերպչական հարցեր	Քննարկել սովորողների վարքը ոչ միայն դպրոցում, այլև տանը: Կարևորել օրվա ռեժիմի ճիշտ բաշխումը և ժամանակի կառավարումը:
Առաջին կիսամյակի ավարտ:	Ուս. տարվա առաջին կիսամյակի առաջադիմության արդյունքների քննարկում:
Երկրորդ կիսամյակի սկիզբ:	Քննարկել առաջին կիսամյակի արդյունքները՝ մշակելով մեխանիզմներ՝ ուսումնական գործընթացն ավելի արդյունավետ դարձնելու ուղղությամբ:
Ծնող-ուսուցիչ համատեղ աշխատանքի միջոցով՝ վերացնել ի հայտ եկած թերացումները:	Ծնողների ներգրավումը ուսումնադաստիարակչական պրոցեսում:
Քննարկել ուսումնական տարվա ընթացքում արձանագրված բացթողումները:	Ծնողների հետ քննարկել սովորողների բարոյահոգեբանական մթնոլորտին և ուսումնառությանը վերաբերող հարցեր:
2022-2023 ուս. տարվա ավարտը և հետագա անելիքները:	Ծանոթացում՝ ամառային արձակուրդների ընթացքում կատարվելիք աշխատանքներին:

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ՝ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՏ

Նախագահ՝ Սահակյան Նարինե
անդամ՝ Խլոպուզյան Հասմիկ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ՝ ԴԱՍԱՐԱՆԻ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՏ

Քննարկվող հարցեր	Ծնողական խորհրդի նիստի համառոտ բովանդակությունը
2022-2023 ուսարվա կատարվելիք աշխատանքները	Ծնողական խորհրդի նախագահին և անդամներին ծանոթացնել կատարվող և կատարվելիք աշխատանքներին, ապահովել աշակերտ-ուսուցիչ-ծնող կապը, քննարկել միջոցառումների նախապատրաստական աշխատանքները: